ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.01.2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝

Հաստատել ավագանու18.01.2017 թ . հերթական նիստի օրակարգը.

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

2.Համայնքի ավագանու 13.12.2016 թվականի թիվ 28-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

3. Համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

4. 2016 թվականի բյուջեի տարեկան կատարողականի մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

5. Սիսավան Համայնքում հողի մի քանի սեփականատերերի հողի հարկի
վճարման արտոնություն տրամադրելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

6. 2017 թվականի բյուջեի հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

7.Սիսավան համայնքի 2017-2021 թթ զարգացման հնգամյա ծրագրի հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի , «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով

Համայնքի ավագանու 13.12.2016 թվականի թիվ 28-Ն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝

1. **Համայնքի տարածքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝**

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ.**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ.**
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **քսանհինգ հազար դրամ.**
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հազար հինգ հարյուր դրամ,**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ:**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **հազար հինգ հարյուր դրամ.**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար **սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.**

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար **սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:**

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

4) Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկված են « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներում առկա 0.5 գործակիցի կիրառմամբ

5) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **քսան հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **տասնվեց հազար հարյուր դրամ.**

8) **համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝**

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար չորս հարյուր դրամ.**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար չորս հարյուր դրամ.**
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար յոթ հարյուր դրամ.**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **ութ հազար չորս հարյուր դրամ.**
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար չորս հարյուր դրամ.**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար չորս հարյուր դրամ.**
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **վեց հազար յոթ հարյուր դրամ.**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **ութ հազար չորս հարյուր դրամ.**

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ **հարյուր տասնյոթ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.**

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ **հազար յոթ հարյուր դրամ.**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **ութ հազար չորս հարյուր դրամ.**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **վաթսունյոթ հազար դրամ.**

դ. խաղատների համար՝ **հարյուր վաթսունյոթ հազար դրամ.**

ե. շահումով խաղերի համար՝ **ութսունչորս հազար դրամ.**

զ. վիճակախաղերի համար՝ **եռեսունչորս հազար դրամ.**

11) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար յոթ հարյուր դրամ.**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար չորս հարյուր դրամ.**
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար չորս հարյուր դրամ.**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար յոթ հարյուր դրամ.**
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար մեկ դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հարյուր յոթանասուն դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հարյուր քառասուն դրամ.**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հարյուր յոթանասուն դրամ.**

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար երեք հարյուր քառասուն դրամ.**

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար յոթ հարյուր դրամ.**

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար մեկ դրամ.**

12) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **յոթ հարյուր դրամ.**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար երկու հարյուր դրամ.**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ.**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հինգ հարյուր դրամ.**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամար**սահմանվածտուրքի 25 %-ի չափով.**

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար**սահմանված տուրքի 10 %-ի չափով:**

13) Սիսավան համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **եռեսուներեք հազար չորս հարյուր դրամ.**

14)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **երեք հազար չորս հարյուր դրամ**

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **հարյուր վաթսունյոթ հազար դրամ**:

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար **ութ հարյուր եռեսուն չորս հազար դրամ.**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **մեկ միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար դրամ**:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն երեք հարյուր եռեսունչորս հազար դրամ.**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն երեք հարյուր եռեսունչորս հազար դրամ.**

17) Սույն հոդվածի դրույքաչափերը բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերի, հաշվարկված են « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներում առկա 0.3 գործակիցի կիրառմամբ

2. **Համայնքի տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝**

1) շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելո հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ.**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանցվերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **մեկ հազար դրամ.**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **մեկ հազար դրամ..**

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար դրամ** .

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **երկու հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

7) Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **հարյուր հիսուն դրամ.**

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **երեք հազար դրամ**

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **վեց հազար դրամ:**

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

9)համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև **երեք հարյուր դրամ** փոխհատուցման վճար.

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով՝

Հաստատել Սիսավանի Համայնքապետարանի 2017 գույքագրման ցանկը համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
18.01.2017Թ. ԹԻՎ 3ՈՐՈՇՄԱՆ

Սիսավանի գյուղապետարանի 2017 գույքագրման ցանկ

h/h	Գույքի անվանումը	Չափի միավորը	փաստացի առկա	փաստացի
1	բազմոց	կտոր	3	3
2	Գրասենյակի պտտվող աթոռներ	հատ	2	2
3	Գրասեղան	հատ	5	5
4	Համակարգչի սեղան	հատ	1	1
5	Ժուռնալի սեղան	հատ	2	2
6	Գրապահարան մեծ	հատ	2	2
7	Պահարան երկաթյա	հատ	3	3
8	Նիստերի սեղան	հատ	1	1
9	Աթոռներ	հատ	16	16
10	Կախիչ	հատ	5	5
11	Սառնարան/ Super general/	հատ	1	1
12	Համակարգիչ	հատ	1	1
	նույն թվում			
13	մոնիտոր	հատ	5	5
14	Պրինտեր HP 1020	հատ	1	1
15	Պրինտեր Samsung ML 2160	հատ	1	1
16	Պրինտեր սկաներ MF 4010	հատ	1	1
17	Սնուցող սարք	հատ	2	2
18	Ջեռուցման կաթսա /Baxi 1,240 fi /	հատ	1	1
19	Ավտոմեքենա ԳԱԶ -3102	հատ	1	1
20	Ավտոմեքենա ՎԱԶ-21213	հատ	1	1
21	Հեռուստացույցի տակդիր	հատ	1	1
22	փոշեկուլ	հատ	1	1
23	Նոթբուք sony vaio core i5	հատ	1	1
24	Համակարգիչ intel core i5	հատ	1	1
25	Համակարգիչ intel core i3	հատ	2	2
26	Վարագույր կախիչով	հատ	4	4
27	Բոքսի տանձիկներ	հատ	3	3
28	Օդորակիչ zanussi	հատ	2	2

ԳՐԱԴԱՐԱՆ

1	Կատալոգի արկղեր	հատ	3	3
2	Էտաժերկա	հատ	6	6
3	Ստելաժ մետաղյա	հատ	24	24
4	Գրականություն	հատ	5120	5120

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	Կուլտուրայի տուն	հատ	1	1
2	Դարբնոց	հատ	1	1
3	Մեխանիկի արհեստանոց	հատ	1	1
4	Լիցքավորման պահեստ	հատ	1	1

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ, ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1	Մետաղական հենասյուներ	հատ	48	48
2	Մետաղական պահունակեր	հատ	48	48
3	Արտաքին լուսավորության լուսատուներ	հատ	48	48
4	Մեկուսիչներ	հատ	96	96
5	Հաղորդալարեր ԱՊՎ 1*16մմ	մետր	1420	1420
6	Հաղորդալարեր լուսատուների լիցքավորման համար ԱՊՎ- 1*2.5մմ	մետր	292.8	292.8
7	Մետաղական պահարան	հատ	4	4
8	Մուտքային եռաֆազ ավտոմատների անջատիչ 63Ա	հատ	4	4
9	Ելքային միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա	հատ	4	4
10	Մագնիսական թողարկիչ ԿԾՔ-120 63Ա	հատ	4	4
11	Ժամանակի ռելե	հատ	1	1
12	Եռաֆազ հաշվիչ	հատ	1	1

ԱՅԳԵՍՏԱՆ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ ՓԱԿՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1	Մետաղական հենասյուներ	հատ	48	48
2	Արտաքին լուսավորության լուսատուներ	հատ	59	59

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

2016 ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով՝

Հաստատել 2016 թվականի բյուջեի տարեկան կատարողականը՝ եկամտային և ծախսային մասերով ներկայացված ցուցանիշներով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝

1. Հաստատել հողի հարկի վճարման արտոնության տրամադրման առաջարկությունը համաձայն հավելվածի

2. Առաջարկել աշխատակազմին իրականացնելու հողատեսքի փոփոխության գործառույթները անշարժ գույքի կադաստրում:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
18.01.2017 Թ. ԹԻՎ 5-Ն ՈՐՈՇՄԱՆ

	Հողամասի ծածկագիրը	Հողամասի սեփականատերը			Սեփակա-նատիրոջ Հողամասի մակերեսը ընդամենը /հեկտար/	Հողատեսքը փոփոխվող հողամասի մակերեսը / հեկտար /	Հողամասի նախկին հողատեսքը	Արտոնության տրամադրման ժամկետը /տարի/	Հողամասի նոր /առկա/ հողատեսքը
1	2	3			4	5	6	7	8
1	104-058	Քալոյան	Յուրիկ	Մամիկոնի	0,757	0,757	վարելահող	4 տարի	Դեղձենու այգի
2	120-005	Մկրտչյան	Վարդան	Արշավիրի	0,5	0,5	վարելահող	5 տարի	Ծիրանի այգի
3	120-004	Մկրտչյան	Արշավիր	Արամի	0,349	0,349	վարելահող	4 տարի	Դեղձենու այգի
4	107-003	Գևորգյան	Աշոտ	Սելիմբեկի	0,793	0,793	վարելահող	4 տարի	Դեղձենու այգի
5	101-017	Արմենյան	Նորայր	Հայկի	0,74	0,74	վարելահող	5տարի	Ծիրանի այգի
6	119-007	Մարտիրոսյան	Ծովիկ		0,28	0,28	վարելահող	4 տարի	Դեղձենու այգի

7	119-006	Մարտիրոսյան	Հուսիկ	Կարապետի	0,445	0,445	վարելահող	4տարի	Դեղձենու այգի
8	101-033	Սիմոնյան	Տիգրան	Արշակի	0,79	0,79	վարելահող	5 տարի	Ծիրանի այգի
9	104-081	Ասլանյան	Ռուբիկ	Սարգսի	0,397	0,397	վարելահող	4 տարի	Դեղձենու այգի

Համայնքի ղեկավար Ս.Թարթիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով՝

Հաստատել Սիսավան համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18.01.2017 Թ. ԹԻՎ 6-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

2017թ.-ի վարչական և ֆոնդային բյուջեների հանրագումարը կազմում է 50 355.8 հազ. դրամ

2017թ.-ի վարչական բյուջեն կազմում է ---------- 47 252.2 հազ. դրամ

2017թ.-ի վարչական բյուջեի եկամտային մաս՝

1. Գույքահարկ ---------- 2520.0 հազ. դրամ

որից՝

գույքահարկ շենք և շինություններից ---------- *120,0 հազ. դրամ*

գույքահարկ փոխադրամիջոցներից ---------- *2400,0 հազ. դրամ*

2. Հողի հարկ---------- 8300,0 հազ. դրամ

3. Տեղական տուրք---------- 1516.8 հազ. դրամ

որից՝

ծխախոտի վաճառքի թույլտվություն ---------- *58.4 հազ. դրամ*

ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ---------- *58.4 հազ. դրամ*

Աղբահանության վճար---------- *1400.0 հազ.դրամ*

4. Դոտացիա ---------- 34407,2 հազ. դրամ

5. Հողերի վարձակալություն---------- 148,2 հազ. դրամ

6. Այլ եկամուտ գույքի վարձակալությունից ---------- 360,0 հազ. դրամ

2016թ.-ի վարչական բյուջեի մաս՝

1. Կառավարման ապարատ----------18438.0 հազ. դրամ

որից՝

աշխատավարձ----------*/4111/*----------*15768,0 հազ. դրամ*

էներգետիկ ծառայություն----------*/4212/*---------- *400.0 հազ. դրամ*

կապի ծառայություն----------*/4214/*---------- *150.0 հազ. դրամ*

ապահովագրական ծախսեր----------*/4215/*---------- *60,0 հազ.դրամ*

մեքենաների ընթացիկ նորոգում----------/4252/---------- 600.0 հազ. դրամ

գրասենյակային նյութեր----------/4261/---------- 250.0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- 800.0 հազ. դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/---------- 100.0 հազ. դրամ

Թերթեր և ամսագրեր----------/4234/---------- -- 150.0 հազ. դրամ

Համակարգչային ծառայություններ----------/4232/----------100.0 հազ. դրամ

Մասնագիտական ծառայություններ----------/4241/----------60.0 հազ.դրամ

2.Սոցիալական հատուկ արտոնություններ---------- 5500,0 հազ. դրամ

որից՝

թաղման նպաստներ----------/4726/---------- 1000,0 հազ. դրամ

այլ նպաստներ----------/4729/---------- 4500,0 հազ. դրամ

3. Հասարակական կազմակերպություններ---------- 300,0 հազ. դրամ

որից՝

նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմ. -/4819/---------- 300,0 հազ. դրամ

4.Փողոցների լուսավորություն---------- 1850,0 հազ. դրամ

որից՝

էներգետիկ ծառայություն----------/4212/----------900,0 հազ. դրամ

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/----------950,0 հազ. դրամ

5.Ջրամատակարարում և կոյուղու համակարգ---------- 1250,0 հազ. դրամ

որից՝

բնակմունալ ծառայություն----------/4213/---------- 400,0. հազ. դրամ

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/----------.----- 850,0 հազ. դրամ

6.Հանգիստ մշակույթ ----------1720.0 հազ. դրամ

որից՝

գույքի վարձակալություն----------/4216/----------.-----100,0. հազ. դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/----------1500,0 հազ. դրամ

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/----------120.0 հազ. դրամ

7. Մշակույթի տներ և ակումբներ ----------6884,0 հազ.դրամ

որից՝

աշխատավարձ ……...../4111/……5184,0 հազ.դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/---------- 650,0 հազ. դրամ

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/---------- 550,0 հազ. դրամ

մասնագիտական ծառայություններ----------/4241/---------- 500,0 հազ. դրամ

շենք շինությունների շինարարություն----------/5112/---------- 1000.0 հազ. դրամ

8.Աղբահանություն---------- 3200,0 հազ. դրամ

որից՝

բնակմունալ ծառայություն----------/4213/----------2600,0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- ---------- 600,0 հազ. դրամ

9.Ճանապարհային տրանսպորտ---------- 1650,0 հազ. դրամ

որից՝

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/---------- ---------- 950,0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- 700,0 հազ. դրամ

10.Արտադպրոցական դաստիրակություն---------- 300,0 հազ.դրամ

որից՝

այլ նպաստներ----------/4729/---------- 300,0. հազ. դրամ

11.Բարձրագույն կրթություն---------- 900,0 *հազ. դրամ*

որից՝

այլ նպաստներ----------/4729/----------900,0 հազ. դրամ

12. Կանաչ տարածքների պահպանում……/4269/……200.0 հազ.դրամ

13.Պահուստային ֆոնդ ----------/4891/----------5060.2 հազ. դրամ

2017 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասը կազմում է …….. 2103.6 հազ. դրամ
որից՝

Շենքերի և շինությունների շինարարություն-----/5112/---------- 2103.6 հազ. դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

Կազմված է 18.01.2017թ.
Բաղկացած է երեք թերթից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 7-Ն

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ դրույթներով՝

Հաստատել Սիսավան համայնքի 2017-2021 թթ զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
18.01.2017թ. ԹԻՎ 9-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՍԻՍԱՎԱՆ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....4
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՔԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....15
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....18
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում.... 19
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում..... 26
6. Համայնքի տարածական զարգացումը սահմանող դրույթներ 30
7. Եզրափակում..... 32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.

համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությունը պայմանավորված է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցների աշխատանքով և առաջարկություններով, համայնքում առկա ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ Սիսավան համայնքը ունի մի շարք առաջնային խնդիրներ : Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, արտադրության , փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

2017-2021թթ. համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների, կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում համայնքի զարգացմանհնգամյա ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում

Սիսավանը ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր կենցաղային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը:

1.2 Համայնքի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ

Սիսավան համայնքը գտնվում է Արարատի մարզում Սիսավան գյուղը՝ որը նախկինում կոչվել է Ենգիջա եղել է լքված գյուղակ:1928թ.-ին այստեղ բնակություն են հաստատում եղեռնից մազապուրծ եղած հայեր,որ գաղթել էին Վանի Սխզայ, Մարմետ, Լեսկ, Հերեն, Բերդակ գյուղերից: Հայրենական մեծ պատերազմից հետո գյուղում վերաբնակվեցին նախկինում Ղադոլու, Քեշվերան, Գարախաչ կոչվող գյուղերի բնակիչներից նաև Սալմաստից գաղթած տարագիր հայեր, որոնք նախ գաղթել եին Եղեգնաձոր՝ որտեղից և վերաբնակվեցին Սիսավանում: Սիսավան գուղում են վերաբնակվել Մարտունուց եկած շատ ընտանիքներ, որոնց ծնողները նույնպես գաղթականներ էին և թողել էին չքնաղ Մուշը:

Արարատի մարզի Սիսավան գյուղը գտնվում է Արարատյան հարթավայրում:

Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 838-886 մ:

Կլիմայական պայմանները Սիսավան բնակավայրում և նրա շրջապատում բնութագրվում է հետևյալ կերպ.

1. Տարեկան միջին ջերմաստիճանը 11.9 ^{0}C
2. Օդի բացարձակ մինիմում ջերմաստիճանը - 30 ^{0}C
3. Օդի բացարձակ մաքսիմում ջերմաստիճանը 42 ^{0}C
4. Օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը -16 ^{0}C
5. Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հյուսիս-արևմուտքից է: Տարեկան միջին արագությունը 2,3մ/վրկ :
6. Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 252մմ
7. Հողի սառեցման հաշվարկային խորությունը 87 սմ

Աճեցման սեզոնի տևողությունը կազմում է 135 օր, միջին ջերմաստիճանը՝ 0,2 ^{0}C:

1.3 Ժողավրդագրություն

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2200 մարդ, այդ թվում տղամարդիկ՝1137 և կանայք 1063 : Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է

աղյուսակ 1-ում:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2220
	Տղամարդիկ	1137
	Կանայք	1063
	0-6 տարեկան , այդ թվում՝	230
	- 0-3 տարեկան	107
	- 3-6 տարեկան	123
	7-17 տարեկան	318
	18-63 տարեկան	1179
	63-ից բարձր տարեկան	415
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	213
	Տարիքային և աշխատանքային	181
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	11
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	95
	Մանկուց հաշմանդամներ	5
9.	Աշխատունակներ	1300
10.	Զբաղվածներ	742
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	558
	Գրանցված	58
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	416
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	116
	Նպաստառու ընտանիքների թիվը	102
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	0
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	37
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	47
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	60
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	125

1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ‘Տեղական ինքնակառավարման մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ‘Տեղական ինքնակառավարման մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր

լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18 - ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանին՝բաղկացած 7 անդամից :

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է ստորև՝



- Համայնքի ղեկավար	1հաստիքային միավոր
- Համայնքի ղեկավարի տեղակալ	1հաստիքային միավոր
- Աշխատակազմի քարտուղար -	1հաստիքային միավոր
- Առաջատար մասնագետ -	2 հաստիքային միավոր
- Առաջին կարգի մասնագետ -	1 հաստիքային միավոր
- Երկրորդ կարգի մասնագետ -	1 հաստիքային միավոր
- Մշակույթի տան Տնօրեն	1 հաստիքային միավոր
- Գրադարանավար	1 հաստիքային միավոր
- Պարի ուսուցչուհի	1 հաստիքային միավոր
- Բոնցքամարտի մարզիչ	1 հաստիքային միավոր
- Պահակ	1 հաստիքային միավոր
- Հավաքարար -	1 հաստիքային միավոր:
Ընդամենը՝	13 միավոր

1.5Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, մշակույթի տանը: Շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված, համալրված է համակարգչային տեխնիկայով: Գյուղը չունի գյուղտեխնիկա և այլ գյուղատնտեսական գործիքներ : Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի , անհրաժեշտ է վերանորոգել ճանապարհներ և փողոցներներ :
Ստորև ներկայացված է 18.01.2017 թվականի դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը.

Սիսավանի գյուղապետարանի 2017 գույքագրման ցանկ

հ/հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	փաստացի առկա	փաստացի
1	բազմոց	կտոր	3	3
2	Գրասենյակի պտտվող աթոռներ	հատ	2	2
3	Գրասեղան	հատ	5	5
4	Համակարգչի սեղան	հատ	1	1
5	Ժուռնալի սեղան	հատ	2	2
6	Գրապահարան մեծ	հատ	2	2
7	Պահարան երկաթյա	հատ	3	3
8	Նիստերի սեղան	հատ	1	1
9	Աթոռներ	հատ	16	16
10	Կախիչ	հատ	5	5
11	Սառնարան/ Super general/	հատ	1	1
12	Համակարգիչ	հատ	1	1
13	նույն թվում			
14	մոնիտոր	հատ	5	5
15	Պրինտեր HP 1020	հատ	1	1
16	Պրինտեր Samsung ML 2160	հատ	1	1
17	Պրինտեր սկաներ MF 4010	հատ	1	1
18	Սնուցող սարք	հատ	2	2
19	Ջեռուցման կաթսա /Baxi 1,240 fi /	հատ	1	1
20	Ավտոմեքենա ԳԱԶ -3102	հատ	1	1
21	Ավտոմեքենա ՎԱԶ-21213	հատ	1	1
22	Հեռուստացույցի տակդիր	հատ	1	1
23	փոշեկուլ	հատ	1	1
24	Նոթբուք sony vaio core i5	հատ	1	1
25	Համակարգիչ intel core i5	հատ	1	1
26	Համակարգիչ intel core i3	հատ	2	2
27	Վարագույր կախիչով	հատ	4	4
28	Բոքսի տանձիկներ	հատ	3	3
29	Օդորակիչ zanussi	հատ	2	2

ԳՐԱԴԱՐԱՆ

1	Կատալոգի արկղեր	հատ	3	3
2	Էտաժերկա	հատ	6	6
3	Ստելաժ մետաղյա	հատ	24	24
4	Գրականություն	հատ	5120	5120

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	Կուլտուրայի տուն	հատ	1	1
2	Դարբնոց	հատ	1	1
3	Մեխանիկի արհեստանոց	հատ	1	1
4	Լիցքավորման պահեստ	հատ	1	1

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ, ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1	Մետաղական հենասյուներ	հատ	48	48
2	Մետաղական պահունակեր	հատ	48	48
3	Արտաքին լուսավորության լուսատուներ	հատ	48	48
4	Մեկուսիչներ	հատ	96	96
5	Հաղորդալարեր ԱՊՎ 1*16մմ	մետր	1420	1420
6	Հաղորդալարեր լուսատուների լիցքավորման համար ԱՊՎ- 1*2.5մմ	մետր	292.8	292.8
7	Մետաղական պահարան	հատ	4	4
8	Մուտքային եռաֆազ ավտոմատների անջատիչ 63Ա	հատ	4	4
9	Ելքային միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա	հատ	4	4
10	Մագնիսական թողարկիչ ԿԾՔ-120 63Ա	հատ	4	4
11	Ժամանակի ռելե	հատ	1	1
12	Եռաֆազ հաշվիչ	հատ	1	1

ԱՅԳԵՍՏԱՆ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ ՓԱԿՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1	Մետաղական հենասյուներ	հատ	48	48
2	Արտաքին լուսավորության լուսատուներ	հատ	59	59

1.6 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Սիսավան համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ: Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Սիսավան համայնքում կանոնավոր ելքերով իրականացվում է աղբահանություն՝ շաբաթը մեկ անգամ , սակայն համայնքի տարածքում աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Սիսավան համայնքում փողոցների մեծ մասը ապահովված է ցերեկային լուսավորությամբ : Համայնքը չունի գերեզմանատուն , հուղարկավորությունները 1968 թվականից կատարվում են համայնքի տարածքին հարող , Դաշտաքար համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական մշակության համար ոչ պիտանի տարածքում : 2015թվականին գերեզմանատուն տանող ճանապարհը խճապատվել է : Համայնքը գազաֆիկացված է , բնակչությունը ամբողջությամբ օգտվում է կապույտ վառելիքից: Համայնքը խմելու ջուր է ստանում օրվա կարգավորիչ ջրամբարից , օրեկան 6-8 ժամ:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա միայն մեկ բազմաբնակարան բնակելի շենք, մնացածը՝ բնակելի առանձնատներ են : Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 49450 քմ: Համայնքում առանձնատների թիվը՝ 416 է և դրանց ընդհանուր մակերեսը՝ 48730 քմ, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝ 7:

Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգված են, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների կառուցման և վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ հաճախակի չեն կառուցվում

1.8 Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 742 մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 81 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 661 մարդ, 125 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների: Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 4 խառը խանութներ :

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը:

1.9 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 501,01 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 364,47, բնակելի շինությունների տակ հողեր՝ 95,74 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 6,62 հա, Էներգետիկայի, կապի, տրանսպորտի տակի հողեր՝ 5,22 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 0,0 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 3,5 հա, 1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է՝0,45հա :

Սիսավան համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ 2-ում

N N	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի N N	Ընդամենը ¥2+3+4+8+12¤	Սեփականության սուբյեկտ									
				<< քաղաքացիների	<< իրավաբանական անձանց	համայնքային					պետական		
						ընդամենը (5+6+7)	տրված անհատույց օգտագործման	տրված ժամկետ վարձակալության	օգտագործման և դրան ժամկետային ժամկետ չունի	ընդամենը (9+10+11)	տրված անհատույց օգտագործման	տրված ժամկետ ունի	ժամկետ չունի
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	1. Գյուղատնտեսական կան	վարելահող		131,74	113,54		18,20		15,70	2,50			
		բազմ տնկարկներ, ընդամենը		207,52	207,52								
		այդ թվում[a] պտղատու այգի		124,28	124,28								
		խաղողի այգի		83,24	83,24								
		այլ բազմամյա											
		խոտհարք											
		արոտ		0,68			0,68			0,68			
		այլ հողատեսքեր		24,53	0,10		24,43			24,43			
		Ընդամենը		364,47	321,16		43,31		15,70	27,62			
	2. Բնակելի շինությունների	բնակելի կառուցապատման		95,74	95,19		0,55			0,55			
		այդ թվում[a] տնամերձ հողեր		95,74	95,19		0,55			0,55			
		այգեգործական (ամառ-ն)											
		հասարակական կառուցապ.		3,93	0,06	0,04	1,26			1,26	2,58	2,58	
		խառը կառուցապատման											
		ընդհանուր օգտագործման		12,27			12,27			12,27			
		այլ հողեր		9,26	0,11		9,16		0,46	8,69			
		Ընդամենը		121,20	95,35	0,04	23,24		0,46	22,77	2,58	2,58	
	3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրամասերի նշանակության	արդյունաբերության		3,08	0,45		2,63		0,44	2,20			
		գյուղտնտեսական, արտադր.		3,54	3,54								
		պահեստարանների											
		ընդերք օգտագործման											
		Ընդամենը		6,62	3,99		2,63		0,44	2,20			
	4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության	Էներգետիկայի		0,08			0,08			0,08			
		կապի											
		տրանսպորտի		3,96							3,96		3,96
		կոմունալ ենթակառուցվածք		1,18	0,20		0,98			0,98			
		Ընդամենը		5,22	0,20		1,06			1,06	3,96		3,96
	5. Առողջարարական նշանակության հողեր	բնապահպանական											
		այդ թվում[a] արգելոցներ											
		արգելավայրեր											
		ազգային պարկեր											
		առողջարարական											

[illegible]		հանգստի											
[illegible]		պատմական և մշակութային											
[illegible]		Ընդամենը											
[illegible]	[illegible]	Ընդամենը											
[illegible]	Անասնատեսային	անտառ											
[illegible]		թփուտ											
[illegible]		վարելահող											
[illegible]		խոտհարք											
[illegible]		արոտ											
[illegible]		այլ հողեր											
[illegible]		Ընդամենը											
[illegible]	Ջրային	գետեր											
[illegible]		ջրամբարներ											
[illegible]		լճեր											
[illegible]		ջրանցքներ		3,50			0,34			0,34	3,16	3,16	
[illegible]		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.											
[illegible]		Ընդամենը		3,50			0,34			0,34	3,16	3,16	
[illegible]	Դիսահարատային	աղուտներ											
[illegible]		ավազուտներ											
[illegible]		ճահիճներ											
[illegible]													
[illegible]		այլ անօգտագործելի հողեր											
[illegible]		Ընդամենը											
[illegible] ՀՈՂԵՐ ¥1+2+3+4+5+6+7+8+9¤				501,01	420,69	0,04	70,58		16,59	53,99	9,70	5,74		3,96

1.10 .Գյուղատնտեսություն

